ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«27» հունվարի 2025թ. № 95-Լ

ՀՐԱՄԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2060-Ն որոշման 17-րդ կետը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն հավելվածի.

2) որ փորձաքննությունների կատարման ծառայություններ ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 1023 «Հարկային և մաքսային ծառայություններ» ծրագրի 11005 «Փորձաքննությունների ծառայություններ» միջոցառմամբ հատկացված միջոցների հաշվին փորձաքննությունների

ծառայությունները ձեռք են բերվում «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն», «Հայաստանի Հանրապետության «Փորձաքննությունների ազգային բյուրո»» պետական ոչ առևտրային կազմակերպություններում, «Առաջին փորձագիտական», «Կրիմինալիստիկական փորձաքննությունների կենտրոն» և «Քրեագետ» դատական և անկախ փորձաքննությունների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում ստացված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ստորաբաժանումների՝ համապատասխան փորձաքննությունը նշանակելու մասին որոշումների հիման վրա.

3) փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը՝ 2025 թվականի համար՝ 4500 դրամ.

4) որ 2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն տվյալ միջոցառման հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում իրավասու է փոփոխելու սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակը՝ ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե ըստ այդ տեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը կամ տեսակը չի համապատասխանի հավելվածում նախատեսվածին:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

1/26/2025

X

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN EDUARD 3001910811

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
<<27>> հունվարի 2025թ.
N 95-Լ հրամանի

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

N	Փորձաքննության տեսակը	Քանակը (հատ)
1	Ձեռագրաբանական	-
2	Հեղինակային	-
3	Փաստաթղթաբանական	165
4	Տեսաձայնագրային	-
5	Ֆոտոտեխնիկական և դիմանկարային	-
6	Հետքաբանական	75
7	Ձգաբանական	1
8	Պայթունատեխնիկական	-
9	Նյութագիտական	926
10	Սննդամթերքի և խմիչքների	119
11	Հողագիտական և կենսաբանական	26
12	Հրդեհատեխնիկական	-
13	Շինարարատեխնիկական	-
14	Ավտոտեխնիկական	10
15	Ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական	-
16	Ապրանքագիտական	1158
17	Էլեկտրատեխնիկական	-
18	Դատահոգեբուժական	-
19	Դատագենետիկական	-
20	Համակարգչատեխնիկական	-
21	Դատաբժշկական	-
22	Մշակութային արժեքների	19
23	Հոգեբանական	-
24	Ճարտարագիտատեխնիկական	-
25	Օդորոլոգիական	-
26	Լինգվիստիկական	-
27	Էկոլոգիական	-
28	Պայթյունատեխնոլոգիական	-
29	Մտավոր սեփականության օբյեկտների	-
30	Միջուկային քրեագիտական	-
Ընդամենը		**2499**